Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ք.Երևան **«13» նոյեմբերի 2025թ.**

ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմը, (այսուհետ՝ **Պատվիրատու**), ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյանի, մի կողմից և **«ԱԿՏԻՎ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ-ն** (այսուհետ՝ **Կատարող**), ի դեմս տնօրեն Աշոտ Աբրահամյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1.Սույն պայմանագրի պայմանների համաձայն Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել իրավաբանական խորհրդատվություն՝ կապված աշխատանքային իրավահարաբերությունների, մասնավորապես՝ աշխատանքային պայմանագրի լուծման կարգի ու պայմանների, ինչպես նաև Կատարողի հանձնարարությամբ իր աշխատակից փաստաբան՝ Հայկ Եգանյանի (արտոնագիր թիվ 523) միջոցով թիվ ԱՐԱԴ/0590/02/25 քաղաքացիական գործով հանդես գալ ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանում, պաշտպանելու Պատվիրատուի իրավունքներն և օրինական շահերը (այսուհետ՝ **Ծառայություն**), իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայության համար սույն պայմանագրի համաձայն:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կատարողը իրավունք ունի.

2.1.1.Ստանալ Ծառայության համար նախատեսված գումարը՝ սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգով:

2.1.2.Ծառայության պատշաճ կարգով իրականացնելու համար Պատվիրատուից ստանալ անհրաժեշտ տեղեկություններ, նյութեր և փաստաթղթեր:

2.1.3.Միակողմանի հրաժարվել սույն պայմանագիրը լրիվ կատարելուց, եթե Պատվիրատուն պայմանագրի 3.2.կետով սահմանված ժամկետում չի վճարում պայմանագրի 3.1.կետում նշված պայմանագրի արժեքը:

2.2. Կատարողը պարտավոր է.

2.2.1.Մատուցել պատշաճ որակի Ծառայություն:

2.2.2.Ծառայությունը մատուցել ամբողջ ծավալով 4.1. կետում նշված ժամկետում:

2.2.3.Պատվիրատուի պահանջով անհատույց վերացնել Ծառայությունում տեղ գտած թերությունները:

2.2.4.Սույն պայմանագրի կատարման ժամկետն ավարտվելու պահից Պատվիրատուի պահանջով վերադարձնել պայմանագրային պարտավորությունները կատարման համար իրենց մոտ գտնվող Պատվիրատուին պատկանող փաստաթղթերը (պատճենները):

2.2.5.Ծառայության մատուցման ընթացքում իրենց հայտնի դարձած, Պատվիրատուի կամ նրա գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը չհրապարակել և չհաղորդել այլ անձանց, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

2.3. Պատվիրատուն և երրորդ անձն իրավունք ունի.

2.3.1.Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայության ընթացքը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը:

2.4. Պատվիրատուի պարտավոր է.

2.4.1.Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում Կատարողին վճարել սույն պայմանագրով նախատեսված վճարումները:

2.4.2.Անձամբ կամ երրորդ անձի միջոցով հավաստի տեղեկություն և նյութեր տրամադրել Կատարողին Ծառայությունը պատշաճ կատարելու համար:

2.4.3.Իր միջոցներով վճարել դատական ծախսերը և այլ պարտադիր վճարումները:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

3.1.Սույն պայմանագրի արժեքը կազմում է 500.000,0(հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

3.2.Սույն պայմանագրի 3.1. կետում նշված գումարը, որպես կանխավճար Պատվիրատուն վճարում է Կատարողին սույն պայմանագրի կնքման պահից սկսած 2/երկու/ օրվա ընթացքում:

3.3.Սույն պայմանագրով սահմանված վճարումները Պատվիրատուն կատարում է փոխանցման կարգով՝ Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, առանց հաշիվ-ապրանքագիր ներկայացնելու:

3.4.Ծառայությունը համարվում է ամբողջությամբ մատուցված վճռի /որոշման/ առկայության կամ վեճի դադարումն հավաստող այլ հանգամանքի ի հայտ գալու պահից, ինչպես նաև այն դեպքում, երբ Պատվիրատուն առանց հիմնավոր պատճառաբանության հրաժարվում է սույն պայմանագրի կատարումից /Կատարողի ծառայություններից/:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

4.1.Սույն պայմանագիրը կնքված է 13.11.2025թ.-ից և գործում է մինչև 1.1. կետում նշված Ծառայության կատարումը կամ պայմանագրի 3.4.կետում նշված հանգամանքների ի հայտ գալը:

4.2.Պայմանագրի 2.1.3.կետում նշված փաստի /պայմանագրի կատարումից Կատարողի միակողմանի հրաժարվելու/ ուժով սույն պայմանագիրը համարվում է լուծված, եթե կողմերի միջև այլ համաձայնություն չի կնքվում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1.Սույն պայմանագրով չկարգավորված հարցերը և կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2.Կողմերը ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտականությունների չկատարումը կապված է ֆորս-մաժորային իրավիճակների (անհաղթահարելի ուժի) հետ: Այդպիսի իրավիճակներ են մասնավորապես երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

6.ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

6.1.Պատվիրատուն նախազգուշացված է, որ Կատարողը և նրա աշխատակից-փաստաբանները որևէ երաշխավորություն և խոստում չեն տալիս Ծառայության արդյունքում Պատվիրատուի շահերի պաշտպանության հետ կապված դատական ելքի վերաբերյալ և պատասխանատվություն չեն կրում ՀՀ դատական ատյանների կողմից ընդունված դատական ակտերի համար:

6.2.Պատվիրատուն նախազգուշացված է ՀՀ Քրեական օրենսգրքի պահանջների համաձայն սուտ բացատրություն տալու մասին:

6.3.Պատվիրատուն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում Կատարողին և նրա աշխատակից-փաստաբաններին ներկայացված նյութերի և տեղեկությունների, ինչպես նաև Ծառայության արդյունքում կազմված փաստաթղթերում ներառված տեղեկությունների հավաստիության համար:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

7.2.Սույն պայմանագրում կատարվող լրացումներն ու փոփոխությունները իրականացվում են փոխադարձ համաձայնությամբ:

7.3.Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, 2(երկու) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ Հասցե՝ ՀՀ, Արագածոտնի մարզ, ք.Աշտարակ, Վ.Պետրոսյան 4 ՀՎՀՀ05031475 Հ/Հ 900441041176 ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ	«ԱԿՏԻՎ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ՀՀ, ք.Երևան, Արշակունյաց 34 Հայէկոնոմբանկի Շենգավիթի մ/ճ Հ/Հ 163018168548 ՀՎՀՀ 02230899 ՏՆՕՐԵՆ
_____ **Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**	_____**Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

Digitally signed by GEVORGYAN HRACHYA
2014650144
Date: 2025.11.13 17:24:31 GMT+04:00

ABRAHAMYAN ASHOT 3211600264

Подписано цифровой подписью: ABRAHAMYAN ASHOT 3211600264
Дата: 2025.11.13 16:28:38 +04'00'